## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 274

## ԳԱՐԻԿ ՎԱՐԱԶԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետի, հիմք ընդունելով Գարիկ Վարազի Գասպարյանի դիմումը, որոշում եմ.

1. Թույլատրել Գարիկ Վարազի Գասպարյանին շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ակունք համայնքի Ակունք գյուղի Եկեղեցու փողոց 8/1 հասցեի ՝ 07-009-0036-0037 ծածկագրով հողակտորում Ակունք համայնքի ղեկավարի կողմից տրված 2018 թվականի օգոստոսի 28-ի թիվ 13 շինարարության թույլտվությամբ սպասարկման օբյեկտի և օժանդակ շինությունների կառուցման շինարարական աշխատանքները՝ թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2020 թվականի օգոստոսի 28-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19 թ. օգոստոսի 14
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 275

## ՌԱՖԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՄԵԽԱԿՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի , «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի , 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N660 որոշման հավելվածի 7-րդ կետի, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 48 կետի, հիմք ընդունելով Ռաֆիկ Գևորգի Մեխակյանի կողմից ներկայացրած նախագծային փաստաթղթերը և դիմումը որոշում եմ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող՝ Ռաֆիկ Գևորգի Մեխակյանի կողմից ներկայացրած <<ԿՈՏԱՅՔՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ի կողմից կազմված նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Ակունք համայնքի Հատիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ ծածկագիր ՝07-040-0002-0005, գյուղատնտեսական նշանակության 0,231 հա հողամասի վրա անասնագոմի և պարսպի կառուցման համար:

2.Ծածկագիր՝ 07-040-0002-0005, 0,231 հա հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ակունք, գյուղ Հատիս , 6-րդ թիվ 2/1:

3.Գյուղատնտեսական նշանակության 0,231 հա-ից 0,05 հա հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրելով արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա:

4.Շինարարական աշխատանքները կատարել նախագծի համաձայն:

5. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունը սկսելու վերաբերյալ :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19 թ. օգոստոսի 15
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 276

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունքի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Գևորգ Ներսեսի Աբգարյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 18.07.2019-ին <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ակունքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն Առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող 0.36 հա, 0.1 հա, 0.24 հա, 0.19 հա, 0.58 հա, 0.16 հա, 0.11 մակերեսներով հողամասերը հանդիսանում են քաղաքացի Գևորգ Ներսեսի Աբգարյանի սեփականությունը, որոնք <Հողի հարկի մասին> օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտներ: 2008-2018թթ ժամանակահատվածի համար քաղաքացի Գևորգ Ներսեսի Աբգարյանի հողի հարկը վճարելու պարտավորությունը կազմում է 142.578 ՀՀ դրամ, որից ապառք՝ 90.709 ՀՀ դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ 51.869 ՀՀ դրամ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում Գևորգ Ներսեսի Աբգարյանը հրավիրվել է վարչական վարույթի լսումների, որին մասնակցելու նպատակով վերջինս պատշաճ ծանուցվել է : Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Հողի հարկի մասին>> օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <Հողի հարկի մասին> օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն հարկային օրենսգրքի 447 հոդվածի և համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող <Հարկերի մասին> օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող <Հարկերի մասին> օրենքի 29.1 հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձել վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Հողի հարկի մասին> օրենքի 1-ին, 16-րդ, իրավահարաբերության ծագման պահին գործող <Հարկերի մասին> օրենքի 29.1-ին, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին > օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ

1. Քաղաքացի Գևորգ Ներսեսի Աբգարյանից հօգուտ Ակունքի համայնքի բյուջեի գանձել 142.578 ՀՀդրամ, որից 90.709 ՀՀ դրամ, որպես հողամասի համար վճարման ենթակահողիհարկի գումար, 51.869 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում բողոքարկվել վարչական կարգով՝ Ակունք համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության Դատական Ակտերի Հարկադիր Կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակունքի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 __ թ.________________

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 277

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունքի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Զոհրապ Սմբատի Շահնազարյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 18.07.2019-ին <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ակունքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն Առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող 0.14 հա, 0.2971 հա, 0.24 հա, 0.19 հա, 0.38 հա, 0.03 հա, 0.082 հա, 0.997 հա մակերեսներով հողամասերը հանդիսանում են քաղաքացի Զոհրապ Սմբատի Շահնազարյանի սեփականությունը, որոնք <Հողի հարկի մասին> օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտներ: 2008-2018թթ ժամանակահատվածի համար քաղաքացի Զոհրապ Սմբատի Շահնազարյանի հողի հարկը վճարելու պարտավորությունը կազմում է 144.075 ՀՀ դրամ, որից ապառ՝ 81.058 ՀՀ դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ 63.017 ՀՀ դրամ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում Զոհրապ Սմբատի Շահնազարյանը հրավիրվել է վարչական վարույթի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 278

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 թիվ 2387-Ն որոշման կարգի 34-րդ կետով. որոշում եմ.

1.Վիլյամ Արամի Խաչատրյանին պատկանող /ծածկագիր 07-049-0040-0001 և 07-049-0040-0002/ անշարժ գույքի միավորման արդյունքում առաջացած անշարժ գույքին տրամադրել հասցե.

մարզ Կոտայք,համայնք Ակունք գյուղ Նոր Գյուղ 22-րդ փողոց թիվ 2,4

2.Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19թ. 08 16
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 279

## ՄԱՐՏԻԿ ԱՂԱԲԵԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ,ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11,22.1-րդ կետերի պահանջներով,<<ԳԻՍ-ԱՐՏ>> ՍՊԸ կողմից տրամադրված չափագրումնեով, Արմեն Մարտիկի Մուրադյանի դիմումով, որով խնդրել են օրինական ճանաչել իրենց կողմից ինքնակամ կառուցված Կոտայքի մարզի Ակունք համայնքի գյուղ Կապուտան 9-րդ փողոց թիվ 6 հասցեում ինքնակամ շենք-շինությունները և հաշվի առնելով, որ սեփականության իրավունքով նրանց պատկանող հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավուքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառոցված չէ քաղաքաշինության նորմերի էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք. որոշում եմ

1. Մարտիկ Աղաբեկի Մուրադյանի,Համլետ Մարտիկի Մուրադյանի և Արմեն Մարտիկի Մուրադյանի կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շենք-շինությունները ճանաչվելու օրինական:
2. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019թ. օգոստոսի 16
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 281

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունքի համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Գնորգ Քրիստափորի Սահակյանը, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 18.07.2019-ին <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> ենթակետի հիմքով Ակունքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն Առընթեր Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքում գտնվող 0.32 հա, 4 հա, 5.92 հա մակերեսներով հողամասերը հանդիսանում են քաղաքացի Գնորգ Քրիստափորի Սահակյանի սեփականությունը, որոնք <Հողի հարկի մասին> օրենքով հանդիսանում են հարկվող օբյեկտներ: 2008-2019թթ ժամանակահատվածի համար քաղաքացի Գնորգ Սահակյանի հողի հարկը վճարելու պարտավորությունը կազմում է 238.302 ՀՀ դրամ, որից ապառք՝ 194.154 ՀՀ դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ 44.148 ՀՀ դրամ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում Գնորգ Քրիստափորի Սահակյանը հրավիրվել է վարչական վարույթի լսումների, որին մասնակցելու նպատակով վերջինս պատշաճ ծանուցվել է : Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Հողի հարկի մասին>> օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <Հողի հարկի մասին> օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն հարկային օրենսգրքի 447 հոդվածի և համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող <Հարկերի մասին> օրենքի 23-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով:

Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող <Հարկերի մասին> օրենքի 29.1 հոդվածի 1-ին մասի՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Հողի հարկի մասին> օրենքի 1-ին, 16-րդ, իրավահարաբերության ծագման պահին գործող <Հարկերի մասին> օրենքի 29.1-ին , <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին > օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ

1. Քաղաքացի Գևորգ Քրիստափորի Սահակյանից հօգուտ Ակունքի համայնքի բյուջեի գանձել 238.302 ՀՀդրամ, որից 194.154 ՀՀ դրամ, որպես հողամասի համար վճարման ենթակահողիհարկի գումար, 44.148 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում բողոքարկվել վարչական կարգով՝ Ակունք համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության Դատական Ակտերի Հարկադիր Կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ակունքի համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 16.

գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 282

ՄԱՐԻ ԱՐՄԵՆԻ ԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի , «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի , 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N660 որոշման հավելվածի 7-րդ կետի, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 48 կետի, հիմք ընդունելով Մարի Արմենի Թևոսյանի կողմից ներկայացրած նախագծային փաստաթղթերը և դիմումը որոշում եմ `

1. Համաձայնեցնել կառուցապատող՝ Մարի Արմենի Թևոսյանի կողմից ներկայացրած <<ԱՆՏՈՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ի կողմից կազմված նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ ծածկագիր `07-049-0282-0053, գյուղատնտեսական նշանակության 0,2684 հա հողամասի վրա անասնագոմի և պարսպի կառուցման համար:

2.Ծածկագիր՝ 07-049-0282-0053, 0,2684 հա հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ակունք, գյուղ Նոր գյուղ, 1-ին փողոց 2/1:

3. Գյուղատնտեսական նշանակության 0,2684 հա հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրելով արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա:

4.Շինարարական աշխատանքները կատարել նախագծի համաձայն:

5. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունը սկսելու վերաբերյալ :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19թ. Օգոստոսի 19
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 283

## ԷԼԵՈՆՈՐԱ ԼԵՎՈՒՇԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով 2019 թվականի օգոստոսի 16-ի կարիքի գնահատման թիվ 27 արձանագրությունը և Ակունք համայնքի Զովաշեն գյուղի բնակիչ Էլեոնորա Լևուշի Հակոբյանի դիմումը, որոշում եմ՝

1 . Ակունք համայնքի բնակիչ Էլեոնորա Լևուշի Հակոբյանին տրամադրել ֆինանսական օգնություն 40 000 /քառասուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19 թ. օգոստոսի 20
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 284

## ԹԵՄՈՒՐ ՋՆԴԻԻ ՆԱՄԱԴՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

## ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով 2019 թվականի օգոստոսի 19-ի կարիքի գնահատման թիվ 28 արձանագրությունը և Ակունք համայնքի Կոտայք գյուղի բնակիչ Թեմուր Ջնդիի Նամադյանի դիմումը, որոշում եմ՝

1. Ակունք համայնքի բնակիչ Թեմուր Ջնդիի Նամադյանին տրամադրել ֆինանսական օգնություն 40 000 /քառասուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20/19 թ. օգոստոսի 20
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 285

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետով՝ որոշում եմ.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող /ծածկագիր 07-036-0111-0162/ անշարժ գույքին տրամադրել հասցե՝

Մարզ Կոտայք, համայնք Ակունք, գյուղ Կապուտան, 16-րդ փողոց թիվ 17/1:

2.Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19թ. օգոստոսի 21
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 286

ԱԻԴԱ ԷԴԻԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, համայնքի ավագանու2018 թվականի մայիսի 18-ի թիվ 31 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով 2019 թվականի օգոստոսի 20-ի կարիքի գնահատման թիվ 29 արձանագրությունը և Ակունք համայնքի Ակունք գյուղի բնակիչ Աիդա Էդիկի Մնացականյանի դիմումը, որոշում եմ՝

1 . Ակունք համայնքի բնակիչ Աիդա Էդիկի Մնացականյանին տրամադրել ֆինանսական օգնություն 50 000 /հիսուն հազար/ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19 թ. օգոստոսի 21
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 287

## ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ,ՍՈՖԻԿ ՎՐԵԺԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 10,11,22 և 22.1 կետերի պահանջներով,հիմք ընդունելով <<ԳԻՍ ԱՐՏ>> ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծը, Արմեն Մարտիկի Մուրադյանի դիմումը և հաշվի առնելով , որ մարզ Կոտայք,համայնք Ակունք գյուղ Կապուտան 9-րդ փողոց թիվ 6 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք որոշում եմ.

1. Արմեն Մարտիկի Մուրադյանին ,Սոֆիկ Վրեժի Մուրադյանին . Համլետ Մարտիկի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված բնակելի նշանակության (այդ թվում՝ նաև տնտեսական և օժանդակ) շենքերը, շինություններեը ճանաչել օրինական:
2. Իսկ 2015 թվականին ինքնակամ կառուցված 5.0քմ և 3.05քմ ծածկի օրինականացման համար համայնքային բյուջե / 900105203211 հաշվեհամար/ կատարել վճարում՝ 3335/երեք հազար երեք հարյուր երեսունհինգ/ՀՀ դրամ:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2019 թ.
օգոստոսի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 288

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետով.որոշում եմ.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող /ծածկագիր 07-009-0101-0209/ անշարժ գույքի բաժանման արդյունքում առաջացած միավորներին տրամադրել հասցե.

1) S1=0.76165հա մակերեսով հողամասին՝ մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Ակունք 1-ին փողոց թիվ 39/1:
2) S2=0.03723հա մակերեսով հողամասին՝ մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Ակունք 1-ին փողոց 2-րդ փակուղի թիվ 5/1
3) S3=0.10650հա մակերեսով հողամասին՝ մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Ակունք 1-ին փողոց 1-րդ փակուղի թիվ 1
4) S4=0.10615հա մակերեսով հողամասին՝ մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Ակունք 1-ին փողոց 1-րդ փակուղի թիվ 9
5) S5=0.09979հա մակերեսով հողամասին՝ մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Ակունք 37-րդ փողոց թիվ 16
6) S6=0.10000հա մակերեսով հողամասին՝ մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Ակունք 37-րդ փողոց թիվ 18
7) S7=0.09999հա մակերեսով հողամասին՝ մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Ակունք 37-րդ փողոց թիվ 4
8) S8=0.10000հա մակերեսով հողամասին՝ մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Ակունք 36-րդ փողոց թիվ 3
9) S9=0.06323հա մակերեսով հողամասին՝ մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Ակունք 36-րդ փողոց թիվ 10

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019 թ. օգոստոսի 26
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 289

ՆԵԼԼԻ ԱԲԱՋՅԱՆԻՆ «ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի ,11 - րդ կետի ,հիմք ընդունելով «Ակունք համայնքի մանկապարտեզ »համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նելլի Աբազյանի դիմումը ,որոշում եմ '

1. «Ակունք համայնքի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նելլի Աբազյանին սույն թվականի օգոստոսի 26-ին ազատել զբաղեցրած պաշտոնից իր դիմումի համաձայն :

2. Օրենքով սահմանված կարգով լուծարել նրա հետ կնքած աշխատանքային պայմանագիրը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19 թ. օգոստոսի 26
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 290

«ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11 -րդ կետի , հիմք ընդունելով Սյուզաննա Մայիսի Աթանեսյանի դիմումը ,որոշում եմ '

1. «Ակունք համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Սյուզաննա Մայիսի Աթանեսյանին :
2.Աշխատանքները սկսել սույն թվականի օգոստոսի 27-ից :
3. Աշխատավարձի չափը համաձայն ընդունված հաստիքացուցակի :
4. «Ակունք համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածությունը ներկայացնել համայնքի ավագանուն համաձայնություն ստանալու համար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19 թ. օգոստոսի 26
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 291

## ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 10-ի N 76-Ն որոշման 2-րդ կետի , որոշում եմ՝

Համայնքի 2019թվականի բյուջեում կատարել վերաբաշխում .

1. Համայնքի բյուջեի 06 բաժնի 03 խմբի 1 դասի <<Ջրամատակարարում>> ծրագրի 5122 հոդվածից 300 000 դրամ տեղափոխել 5113 հոդված:

2. Համայնքի բյուջեի 09 բաժնի 01 խմբի 01 դասի <<Նախադպրոցական կրթություն>> ծրագրի 4251 հոդվածի III-րդ եռամսյակից 800 000 դրամ տեղափոխել 4511 հոդված:

3. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 01 դասի <<Օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում>> ծրագրի 4251 հոդվածից 800 000 դրամ տեղափոխել՝ 04 բաժնի 05 խմբի 01 դասի <<Ճանապարհային տրանսպորտ>> ծրագրի 4239 հոդված 300 000 դրամ , 4216 հոդված 300 000 դրամ, 4251 հոդված 200 000 դրամ:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2019թ. օգոստոսի 26
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 292

## ՀԱՍՄԻԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 161-րդ հոդվածների, հիմք ընդունելով Ակունք համայնքի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և համակարգման բաժնի պետ Հասմիկ Մելքումյանի դիմումը ,որոշում եմ՝

1.Տրամադրել Ակունք համայնքի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և համակարգման բաժնի պետ Հասմիկ Մելքումյանի ամենամյա և լրացուցիչ արձակուրդը սույն թվականի սեպտեմբերի 2-ից մինչև հոկտեմբերի 3-ը ներառյալ:

2. Փոխարինող նշանակել համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Լուսինե Չոբանյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2019թ. օգոստոսի 26
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 293

## ԳԱՍՊԱՐ ԳՈՒՐԳԵՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻՆ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հողային Օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջները և Գասպար Գուրգենի Սիմոնյանի դիմումը. որոշում եմ

1. Գասպար Գուրգենի Սիմոնյանին պատկանող /հիմք 10.08.2019 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր/, մարզ Կոտայք համայնք Ակունք գյուղ Սևաբերդ 1-ին փողոց թիվ 1/5 հասցեում գտնվող անասնաշենքի սպասարկման համար առանձնացված 0.13268հա հողամասի հիմքերը համարել վերականգնված:
2. Քանի որ 0.13268հա հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,ապա հողամասը օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով փոխանցել Գասպար Գուրգենի Սիմոնյանին պայմանով՝օտարման դեպքում կատարելու տվյալ պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարում:
3. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2019թ. Օգոստոսի 27
գ. Ակունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 294

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի՝ որոշում եմ.

1.Կառուցապատող՝Ակունք համայնքին տալ շինարարության թույլտվություն Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի 22-րդ և 10-րդ փողոցներում կոյուղու արտաքին ցանցի հիմնանորոգման համար:

2.Շինարարական աշխատանքները կատարել նախագծի համաձայն:

3. Պարտավորեցնել կառուցագապատողին շինարրությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունն սկսելու վերաբերյալ :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019 թ. օգոստոսի
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 295

**ԱՇՈՏ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, հիմք ընդունելով Աշոտ Վլադիմիրի Դանիելյանի դիմումը ՝ որոշում եմ.

1.Աշոտ Վլադիմիրի Դանիելյանին տալ մեկ հարկանի տնտեսական շինության կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ակունք համայնք Նոր բնակավայրի 1-ին տեղամաս 5-րդ փողոց թիվ 14 հողամասի ՝ ծածկագիր 07-049-0050-0001, 0,1 հա բնակելի կառուցապատման հողամասում, համաձայն Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) անհատական բնակելի տների բազմակի օգտագործման <<ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՏԻՊ- Ա>> նախագծի:

2.Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությանը սկսելու վերաբերյալ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 13թ. սեպտեմբերի 03
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 296

## ԻՆՆԱ ԱՐԿԱԴԵՎՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, հիմք ընդունելով Իննա Արկադևնա Հովհաննիսյանի դիմումը ՝ որոշում եմ.

1. Իննա Արկադևնա Հովհաննիսյանին տալ երկհարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ակունք համայնք գյուղ Նոր գյուղ 14-րդ փողոց թիվ 2 հասցեի՝ ծածկագիր 07-049-0009-0026, 0,067 հա բնակելի կառուցապատման հողամասում, համաձայն Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) անհատական բնակելի տների բազմակի օգտագործման Բ-4ծ նախագծի:

2. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությանը սկսելու վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19 թ. սեպտեմբերի 03
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 297

## ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 10-ի N 76-Ն որոշման 2-րդ կետի , որոշում եմ՝

Համայնքի 2019թվականի բյուջեում կատարել վերաբաշխում .

1. Համայնքի բյուջեի 08 բաժնի 02 խմբի 03 դասի <<Մշակույթ>> ծրագրի 5113 հոդվածից 4 600 000 դրամ,

04 բաժնի 02 խմբի 01 դասի <<Գյուղատնտեսություն>> ծրագրի 5112 հոդվածից 1 000 000 դրամ,

05 բաժնի 01 խմբի 01 դասի <<Աղբահանություն>> ծրագրի 5121 հոդվածից 1 100 000 դրամ,

տեղափոխել համայնքի բյուջեի 06 բաժնի 03 խմբի 1 դասի <<Ջրամատակարարում>> ծրագրի 5113 հոդված :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2019թ. [illegible]
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 298

## ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՏԻՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հողային Օրենսգրքի 75-րդ հոդվածի,Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի թիվ 51 որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի . որոշում եմ.

1. Ակունք համայնքի Հատիս վարչական տարածքի համայնքային սեփականություն հանդիսացող վարչական շենքի պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0.06613հա մակերեսով հողամասի հատկացման հիմքերը համարել վերականգնված:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է):
3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ակունք գյուղ Հատիս 5-րդ փողոց թիվ 2:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ ՌՈՒԲԵՆՅԱՆ

20__ թ. ______________ ___
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 299

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի ԹԻՎ 112 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն « Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի.որոշում եմ՝

Համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 16-ի «Մանուկ Լիպարիտի Հովհաննիսյանին Պատկանող Շինությանը Նախկինում Հատկացված Հողամասի Հիմքերի Վերականգնման Վերաբերյալ» թիվ 112 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1)նախաբանում «Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ» բառերից հետո լրացնել «և 16-րդ կետի» բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19 թ. սեպտեմբերի 10.
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 300

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի ՝ որոշում եմ.

1.Կառուցապատող՝Ակունք համայնքին տալ շինարարության թույլտվություն Ակունք համայնքի Ակունք բնակավայրի 5-րդ , Կենտրոնական խճուղի 1 և Կապուտան բնակավայրի 1-ին և 2-րդ փողոցների ասֆալտապատման համար:

2.Շինարարական աշխատանքները կատարել նախագծի համաձայն:

3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունն սկսելու վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19թ. 11.09.2019
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 301

## <<ԱՄ- ԷՍԿԱ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի , «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի , 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N660 որոշման հավելվածի 7-րդ կետի, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 48 կետի, հիմք ընդունելով «ԱՄ-ԷՍԿԱ»սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրենի կողմից ներկայացրած նախագծային փաստաթղթերը և դիմումը որոշում եմ `

1. Համաձայնեցնել կառուցապատող՝ «ԱՄ-ԷՍԿԱ» սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից ներկայացրած <<ԱՆՏՈՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից կազմված նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Ակունք համայնքի Կոտայք բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ ծածկագիր `07-038-0113-0024, գյուղատնտեսական նշանակության 0,99 հավարելահողի վրա 1808.6 քմ ջերմոցի և 24, 9 քմ օժանդակ շինության կառուցման համար:

2.Ծածկագիր՝ 07-038-0113-0024, 0,99 հա հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ակունք, գյուղ Կոտայք, Կոտայք-Կապուտան խճուղի 113 թաղամաս, թիվ 9/1:

3.Գյուղատնտեսական նշանակության 0,99 հա հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրելով արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա:

4.Շինարարական աշխատանքները կատարել «ԱՆՏՈՆՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ »ՍՊԸ-ի կազմված նախագծի համաձայն:

5. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունը սկսելու վերաբերյալ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 12
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 302

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29 -րդ կետով. որոշում եմ

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 07-009-0101-0189 և 07-009-0101-0222 ծածկագրերով համապատասխանաբար 0.1013հա և 0.1 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերի միավորման արդյունքում առաջացած միավորին տրամադրել՝ մարզ Կոտայք,համայնք Ակունք 36-րդ փողոց թիվ 1-3 հասցե:
2. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19 թ. սեպտեմբերի 16
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 303

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ,ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի , 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով,19.08.2019 թվականի Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 71 եզրակացությունը,հիմք հիմք ընդունելով համայնքի ավագանու 13 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 44 որոշումը և հաշվի առնելով Արթուր Ռազմիկի Մկրտչյանի դիմումը, որոշում եմ.

1. Արթուր Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող/հիմք 01032019-07-0031 վկայական/ Կոտայքի մարզի Ակունք համայնքի գյուղի Կոտայք 07-038-0140-0033 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 900,0 քառ.մետր մակերեսով, փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատում հողերի կատեգորիա, օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար:
2. Արթուր Ռազմիկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ակունք համայնքի գյուղի Կոտայք 07-038-0140-0033 կադաստրային համարի 900,0 քառ.մ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք,համայնք Ակունք, գյուղ Կոտայք, 140-րդ թաղամաս թիվ 33:
3. Որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Կոտայքի մարզի Ակունք համայնքի բյուջեի N 900105203179 հաշվին պետք է վճարի հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 789525 (յոթ հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր քսանհինգ ) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարումները չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019 թ. սեպտեմբերի 18
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 304

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ,ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի , 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով,19.08.2019 թվականի Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 71 եզրակացությունը,հիմք հիմք ընդունելով համայնքի ավագանու 13 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 44 որոշումը և հաշվի առնելով Արսեն Վահրամի Մկրտչյանի դիմումը, որոշում եմ.

1. Արսեն Վահրամի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող/հիմք 26112018-07-0091 վկայական/ Կոտայքի մարզի Ակունք համայնքի գյուղի Կոտայք 07-038-0143-0038 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 500,0 քառ.մետր մակերեսով, փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա, օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար:
2. Արսեն Վահրամի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ակունք համայնքի գյուղի Կոտայք 07-038-0143-0038 կադաստրային համարի 500,0 քառ.մ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք,համայնք Ակունք, գյուղ Կոտայք, 143-րդ թաղամաս թիվ 38:
3. Որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Կոտայքի մարզի Ակունք համայնքի բյուջեի N 900105203179 հաշվին պետք է վճարի հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 438625 (չորս հարյուր երեսունութ հազար վեց հարյուր քսանհինգ ) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարումները չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արսեն Վահրամի Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19 թ. ____________
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 305

## ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 10-ի N 76-Ն որոշման 2-րդ կետի , որոշում եմ՝

Համայնքի 2019թվականի բյուջեում կատարել վերաբաշխում.

1. Համայնքի բյուջեի 05 բաժնի 01 խմբի 01 դասի <<Աղբահանություն>> ծրագրի 5121 հոդվածից 2 800 000 դրամ IV եռամսյակից տեղափոխել III եռամսյակ , և 04 բաժնի 05 խմբի 01 դասի <<Ճանապարհային տրանսպորտ>> ծրագրի 5113 հոդված:
2. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 01 դասի <<Օրենսդիր,գործադիր մարնիններ, պետական կառավարում>> ծրագրի 5113 հոդվածից 625 000 դրամ IV եռամսյակից տեղափոխել III եռամսյակ , և 04 բաժնի 05 խմբի 01 դասի <<Ճանապարհային տրանսպորտ>> ծրագրի 5113 հոդված:
3. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 01 դասի <<Օրենսդիր,գործադիր մարնիններ, պետական կառավարում>> ծրագրի 5122 հոդվածից 565 000 դրամ IV եռամսյակից տեղափոխել III եռամսյակ , և 04 բաժնի 05 խմբի 01 դասի <<Ճանապարհային տրանսպորտ>> ծրագրի 5113 հոդված:
4. Համայնքի բյուջեի 04 բաժնի 05 խմբի 01 դասի <<Ճանապարհային տրանսպորտ>> ծրագրի 5113 հոդվածից 7 075 000 դրամ տեղափոխել IV եռամսյակից III եռամսյակ:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019թ. սեպտեմբերի 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 306

## ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՏԱՅՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԱՀԻՏ ՌԱԶՄԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակունք համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին է դիմել համայնքի բնակիչ Անահիտ Ռազմիկի Կարապետյանը Ակունք համայնք գյուղ Կոտայք 4փողոց տուն 15 հասցեի՝ միակողմանի ծնողազուրկ աղջկա՝ Լուսինե Միրակի Կարապետյանի բաժնեմասը վաճառելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին խնդրանքով,՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական N07-038-0120-0028:

Համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրություններից պարզվել է,որ Անահիտ Ռազմիկի Կարապետյանը ապրում է աղջկա՝ Լուսինե Միրակի Կարապետյանի հետ նույն հարկի տակ, հանդիսանում է վերջինիս խնամակալը և նրա փոխարեն լիազորված է կատարելու բոլոր տեսակի գործարքները:

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 29,30 և 39 հոդվածներով՝ որոշում եմ՝

1.Տալ համաձայնություն Ակունք համայնք Կոտայք բնակավայրի 4փ. 15տուն հասցեի բնակիչ՝Անահիտ Ռազմիկի Կարապետյանին վաճառելու իր աղջկա՝ Լուսինե Միրակի Կարապետյանի բաժնեմասը / սեփականության իրավունքի գրանցման վկայական N07-038-0120-0028/ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 307

## ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 10-ի N 76-Ն որոշման 2-րդ կետի , որոշում եմ՝

Համայնքի 2019թվականի բյուջեում կատարել վերաբաշխում .

1. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 01 դասի <<Օրենսդիր,գործադիր մարնիններ, պետական կառավարում>> ծրագրի 4221 հոդվածից 560 000 դրամ տեղափոխել 4269 հոդված , 4239 հոդվածից 100 000 դրամ տեղափոխել 4269 հոդված:

2. Համայնքի բյուջեի 01 բաժնի 01 խմբի 01 դասի <<Օրենսդիր,գործադիր մարնիններ, պետական կառավարում>> ծրագրի 4232 հոդվածի III եռամսյակից 214 000 դրամ տեղափոխել 4269 հոդվածի III եռամսյակ, 4239 հոդվածի III եռամսյակից 12 000 դրամ տեղափոխել 4241 հոդվածի III եռամսյակ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019 թ. սեպտեմբերի 20
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 308

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ,ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի , 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ եզրակացությունը,հիմք ընդունելով համայնքի ավագանու 13 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 44 որոշումը և հաշվի առնելով Լևոն Հմայակի Մարտիրոսյանի դիմումը, որոշում եմ.

1. Լևոն Հմայակի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող/հիմք 201022017-07-0092 վկայական/ Կոտայքի մարզի Ակունք համայնքի գյուղի Նոր Գյուղ 07-049-0282-0048 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության այլ հողը՝ 172.2 քառ.մետր մակերեսով, փոխադրել բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա:
2. Լևոն Հմայակի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ակունք համայնքի գյուղի Նոր Գյուղ 07-049-0282-0048 կադաստրային համարի բնակավայրերի հասարակական կառուցապատման ՝ 172.2 քառ.մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք,համայնք Ակունք, գյուղ Նոր Գյուղ,1-ին փողոց թիվ 4/1 :
3. Որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Կոտայքի մարզի Ակունք համայնքի բյուջեի N 900105203179 հաշվին պետք է վճարի հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 212710(երկու հարյուր տասներկու հազար յոթ հարյուր տաս) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարումները չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 թ. ____________
գ. Ակունք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 309

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ,ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի , 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով,19.08.2019 թվականի Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 83 եզրակացությունը,հիմիք հիմք ընդունելով համայնքի ավագանու 13 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 44 որոշումը և հաշվի առնելով Պերճ Վազգենի Ոսկերչյանի դիմումը, որոշում եմ.

1. Պերճ Վազգենի Ոսկերչյանին սեփականության իրավունքով պատկանող/հիմք 05052019-07-0082 վկայական/ Կոտայքի մարզի Ակունք համայնքի գյուղի Նոր Գյուղ 07-049-0226-0047 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 1200,0 քառ.մետր մակերեսով, փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա, օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար:
2. Պերճ Վազգենի Ոսկերչյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ակունք համայնքի գյուղի Նոր Գյուղ 07-049-0226-0047 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 1200,0 քառ.մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք,համայնք Ակունք, գյուղ Նոր Գյուղ,226-րդ թաղամաս թիվ 47:
3. Որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Կոտայքի մարզի Ակունք համայնքի բյուջեի N 900105203179 հաշվին պետք է վճարի հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 1423800 (մեկ միլիոն չորս հարյուր քսաներեք հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարումները չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Պերճ Վազգենի Ոսկերչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 __ թ. ____________

գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 310

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18 թիվ 912-Ն որոշման կարգի 8,18 և 22 կետերի, հաշվի առնելով որ ինքնակամ կառույցները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և Ազատ Լևիկի Գրիգորյանի դիմումը․ որոշում եմ

1. Ազատ Լևիկի Գրիգորյանի կողմից կառուցված 9․0քմ հավաբունը և 1․45քմ պարիսպը համարել օրինական:
2. Պարտավորեցնել ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար համայնքային բյուջե 900105203211 հաշվեհամարին վճարել 8150/ութ հազար հարյուր հիսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ
3. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19 թ. սեպտեմբեր
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# **Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 311

## ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի ԹԻՎ 7 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ .

Ղեկավարվելով << Նորմատիվ Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի պահանջներով ***ո ր ո շ ու մ ե մ .***

1. Կոտայքի համայնքի ղեկավարի 2004 թվականի մայիսի 3-ի <<Կոտայք գյուղի բնակիչ՝ Անահիտ Ռազմիկի Կարապետյանին իր դստեր՝ Լուսինե Սիրակի Կարապետյանի/ ծնված 1981թ/ նկատմամբ խնամակալ նշանակելու մասին>> թիվ7 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1)Որոշման 2-րդ կետում <<կեսակի>> բառը փոխարինել << տեսակի >>բառով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19 թ. ______
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 312

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՍՈՒՆ ՍԱՆԱՍԱՐԻ ԿՈԾԻՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան /նկարագրական մաս/.

Համաձայն Կոտայքի մարզպետի 2018 թվականին հոկտեմբերի 25-ի թիվ 320-Ա որոշմամբ ստեղծված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա իրականացրած ինքնակամ և ՀՀ հողային օրենսդրությանն ու քաղաքաշինական նորմերին չհամապատասխանող կառուցապատումները ուսումնասիրող աշխատանքային խմբի տեղեկատվություն և Կոտայքի մարզպետի 28.12.2018 թվականի թիվ 01/19.1/7269-18 գրության քաղաքացի Սասուն Սանասարի Կոծինյանի կողմից գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա իրականացրած ինքնակամ շենք-շինությունների կառուցման համար ենթարկել վարչական տուժի:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը համաձայն <<Վարչական իրավախախտումների մասին>> օրենսգրքի տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ: <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածի հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը՝առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հիմք ընդունելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 9-ր հոդվածի 1-ին մասը, 10-րդ, 32-րդ, 40-րդ, 154-րդ հոդվածը և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը որոշում եմ.

1. Քաղաքացի Սասուն Սանասարի Կոծինյանին ենթարկել վարչական պատասխանատվության <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
2. Պարտավորեցնել տուգանքի գումարը վճարել Ակունքի համայնքապետարանի 900105203104 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը և կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2019 թ. սեպտեմբերի
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 313

## ՍՎԵՏԱ ՀԱՅԿԱԶԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով կառուցապատող Սվետա Հայկազի Ավագյանի դիմումը ՝ որոշում եմ.

1.Սվետա Հայկազի Ավագյանին տալ քանդման թույլտվություն Ակունք համայնքի Ակունք բնակավայրի 7-րդ փողոցի թիվ 3 հասցեի հավաքնի, անասնաշենքի, պահեստի, խոհանոցի, մառանի, թոնրատան, պարսպի և շվաքարանի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 __ թ. ____
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 314

## <<ԱԼԵՔՍԱՆԴ ԱԶԻԶՅԱՆ>> ԱՁ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱՏՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի19 N 843-Ն որոշման, հիմք ընդունելով Ալեքսանդ Էդիկի Ազիզյանի կողմից ներկայացված հայտերը. որոշում եմ.

1.Տրամադրել << Ալեքսանդր Ազիզյան Էդիկի>> ԱՁ-ին Ակունք համայնքի Ակունք գյուղի Եկեղեցու փողոց թիվ 10 հասցեում 2019 թվականի հուլիսի 1-ից մնչև 2019 թվականի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում.

1) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն,

2) ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 19թ. սեպտեմբերի 24
գ. Ակունք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 315

ԷԼՄԻՐԱ ՂԱՐԻԲԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 45 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի19 N 843-Ն որոշման, հիմք ընդունելով Էլմիրա Ղարիբի Խաչատրյանի կողմից ներկայացված հայտը՝ որոշում եմ .

1.Ակունքի համայնքում մանրածախ առևտրով զբաղվող Նոր գյուղ բնակավայրի 1-ին փողոց 39 հասցեի անհատ ձեռնարկատեր <<Էլմիրա Խաչատրյան>>- ին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2019 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 19թ. սեպտեմբերի 24
գ. Ակունք